ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

02.02.2012թ. գ. Ազատ

Տեղի ունեցավ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ազատ համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը, մասնակցում էին Գեղարքունքի մարզի մարզպետարանի ներկայացուցիչ Հովհաննիսյան Վանիկ, համայնքի ավագանու չորս անդամները, տասնյոթ հոգի համայնքի բնակիչներ, համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատողները:
Համայնքի ղեկավարը դիմելով ներկաներին նշեց, որ այս արարողությունը կատարվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի 2008թ-ի օգոստոսին տեղի ունեցած մարզխորհրդի որոշմամբ, ըստ որի մարզի համայնքների ղեկավարը պարտավոր են ամեն հաշվետու տարվա ավարտից հետո հաշվետվություն ներկայացնեն իրենց համայնքի բնակիչներին, որը կատարվում է մեծ սիրով:
Հարգելի՝ Ազատ գյուղի բնակիչներ, համագյուղացիներ.
Մեր համայնքում հաշվառված են հիսունչորս տնտեսություններ, որոնցից բացակայում են 25 տնտեսություններ, մշտական բնակչությունը կազմում է 145 հոգի, անցած տարի համայնքից դուրս են գրվել ինը հոգի: Համայնքում գործում է հիմնական դպրոց՝ տասներեք աշակերտով:
Համայնքի ընդհանուր վարչական տարածքը կազմում է 847.7հա, որից վարելահող 381հա, խոտհարք 13.3հա, արոտ 279.8հա, տնամերձ 20.6հա:
2011թ-ի համայնքի բյուջեն կազմել է երեք միլիոն վեց հարյուր իննսունհինգ հազար հինգ հարյուր դրամ, առանց դոտացիայի, 2011թ-ի համայնքի բյուջեն կատարվել է 88.1%-ով, այսինքն նախատեսված երեք միլիոն վեց հարյուր իննսունհինգ հազար, հինգ հարյուր դրամի դիմաց կատարվել է երեք միլիոն երկու հարյուր հիսունհինգ հազար ութ հարյուր դրամ գանձում, որից 897119դրամ հողի հարկ, 1903543 դրամ հողի վարձավճար, 19400 դրամ գույքահարկ, 705300 դրամ անցած տարիների ապառք:
2011թ. ընթացքում վճարվել է նախորդ տարիների աշխատավարձի պարտք՝ 1285000 դրամ:
2011թ. սոցիալական ապահովություն է վճարվել 983500 դրամ նախատեսվածի 100%:
Գյուղում ավելացել են անասնապահությամբ զբաղվող տնտեսությունների թիվը, գյուղապետարանի միջնորդությամբ և առաջարկությամբ երկու հոգի ընդունվել են աշխատանքի «Վահան» ՍՊԻ-ում: Երկու հոգի անցել են պայմանագրային զինվորական զինծառայության: 2011թ. օգոստոս ամսին համայնքի ղեկավարի ընտրությունից հետո միջհամայնքային ճանապարհներին փոսլցումներ կատարվեց և հարթեցվեց, որի շնորհիվ անցանելի վիճակում է գտնվում Սոթք - Ազատ, Ազատ – Կութ, Ազատ – Նորաբակ միջհամայնքային ճանապարհները: 1941 – 1945թթ. երկրոդ համաշխարհային պատերազմի կապակցությամբ, Հայրենական մեծ պատերազմի մասնակից, Ազատ գյուղի բնակիչ՝ Սարգիս Բաբայանին գյուղապետարանի կողմից, ավագանու որոշմամբ, հատկացվել է քսան հազար դրամ և ապահովել է նրա մասնակցությունը՝ Վարդենիս քաղաքում տեղի ունեցած հաղթանակին նվիրված արարողությանը, որտեղ նրան տրվել է հուշանվեր:
Այս օրվա դրությամբ շատ խնդիրներ կան լուծելու, որոնք լուծելու ուղիներ ենք փնտրում և կարևորը գյուղացիների մոտ սեփական հողի, ապագայի նկատմամբ հավատի վերականգնումն է, համոզված եմ, որ գալու է մի օր, երբ համայնքում լուծված կլինեն խնդիրների գոնե մի մասը և բնակիչներից այլևս ոչ ոք չի ուզենա հառանալ իր հայրենի հողից:
Ազատ համայնքում հետևողական աշխատանքներ է տարվում՝ համայնքը սանիտարահիգենիկ պատշաճ վիճակում պահելու ուղղությամբ:
2011թ. համայնքի ղեկավարի աշխատանքները գնահատվել են դրական:

Ազատ համայնքի ղեկավար՝ Ս. Սահակյան